

# Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարի մեթոդները

Բույսերի պաշտպանության ինտեգրացված պայքարն այնպիսի համակարգ է, որտեղ ժամանակակից օրգանիզմի ոչնչացման համար նախ պայքարը կազմակերպում են ագրոտեխնիկական, ֆիզիկամեխանիկական, կարանտին, կենսաբանական եղանակներով և միայն անհրաժեշտության դեպքում անցում կատարում դեպի պայքարի քիմիական եղանակ: Նախքան պայքարի միջոցառումներ ձեռնարկելը, հարկավոր է իրականացնել **մշտադիտարկում**: Վնասատուի հասուն արուներին որսալու նպատակով առաջարկվում են ֆերոմոնային թակարդներ, որոնք թույլ են տալիս ճշտորեն վերահսկել վնասատուների թռիչքների ակտիվությունը և թռիչքի սևողությունն ամբողջ սեզոնի ընթացքում: Ֆերոմոնային թակարդների տեղադրումը հնարավորություն է տալիս նախապես բացահայտել վնասատուի թվաքանակի բարձր խտությամբ օջախները, նախապատրաստել տեխնիկան, ինչպես նաև համատարած սրսկումների փոխարեն կատարել տեղային (օջախային) սրսկումներ:

Վնասատուների դեմ պայքարելու համար կիրառվում են հետևյալ **մեթոդները**:

## Կենսաբանական մեթոդ

Վնասակար միջատների, սզերի և կրծողների դեմ պայքարի կենսաբանական մեթոդի իրականացման համար օգտագործվում են դրանց բնական թշնամիները՝ **մակաբույծները, գիշատիչները և հիվանդությունների հարուցիչները**: Վնասակար միջատների դեմ օգտագործվում են էնտոմոֆագերը՝ գիշատիչ և մակաբույծ այլ տեսակների միջատները: Մակաբույծ միջատների համար ժամանակակից



միջատի մարմինը սննդի աղբյուր է իր սերնդի զարգացման համար: Մակաբույծված ժամանակակից միջատները որոշ ժամանակ անց դադարում են սնվել և ոչնչանում են: Արհեստական կերպով ավելացնելով գիշատիչների և մակաբույծների քանակը, հաջողվում է զգալիորեն նվազեցնել վնասատուի պոպուլյացիայի խտությունը և, հետևաբար, դրա վնասակարության աստիճանը: Վնասակար միջատների ու սզերի բնական մակաբույծներին և գիշատիչներին բազմացնում են լաբորատորիաներում արհեստական կերով: Այս եղանակով ստացված գիշատիչների ու մակաբույծների միլիոնավոր

անհատներին բաց են թողնում բնության մեջ վնասակար օրգանիզմների զանգվածային բազմացման օջախներում: Վնասատուների դեմ պայքարի համար օգտագործվում են նաև **վնասակար օրգանիզմների հիվանդությունների հարուցիչներ՝ բակտերիաներ, վիրուսներ, սնկեր**: Արհեստական պայմաններում բազմացվում են վնասատուների հիվանդությունների հարուցիչներ և հատուկ պատրաստուկների տեսքով տարածում վնասատուների բազմացման օջախներում: Տարածուից իրականացվում է ցողման եղանակով՝ սրսկիչների օգնությամբ:

Բավական արդյունավետ է համարվում **«արուների ապակողմսորոշում»** կոչված եղանակը, որի էությունը կայանում է նրանում, որ պտղատու այգում կախում են **ֆերոմոնային դիսպենսերներ**, որոնցում պարունակվող ֆերոմոնները համաչափ տարածվում են ծածկելով էգերի հոտավետ հետքերը: Արուները հոտառությամբ չեն կարողանում գտնել էգերին, քանի որ շրջապատի բոլոր ուղղություններից զգալով նույն հոտը, ապակողմսորոշվում են: Այսպիսով, էգերի զգալի զանգված մտնում է չբեղմնավորված:



## Ֆիզիկամեխանիկական մեթոդ

Պայքարի այս մեթոդի էությունն այն է, որ վնասակար օրգանիզմների զարգացման տարբեր փուլերում դրանց հավաքում են կամ հատուկ մեխանիկական սարքավորումների, զանազան նյութերի օգնությամբ գրավում, որսում և ոչնչացնում են: Այսպես, օրինակ, զանազան կրծող վնասատուների դեմ օգտագործվում են տարբեր տիպի և կառուցվածքի **մեխանիկական թակարդներ**: Գիշերային կյանք վարող և լույսի վրա թռչող միջատների դեմ օգտագործվում են հատուկ **լուսաթակարդներ**:



Վնասակար միջատների թրթուրների դեմ հաճախ կիրառվում են հատուկ սուսնձով մշակված և ծառերի բներին ամրացված թղթե օղակներ: Կաշելով սուսնձին, թրթուրների հետագա տեղաշարժը արգելակվում է, իսկ սուսնձը, պատելով մարմնի մակերեսը, սպանում է դրանց:



Ֆիզիկամեխանիկական մեթոդը ներառում է նաև վարակված բուսական մնացորդների հավաքումը և ոչնչացումը, էտի ժամանակ վարակված ճյուղերի և շիվերի հեռացումը:

### Ագրոտեխնիկական մեթոդ

Ագրոտեխնիկական տարրեր միջոցառումներով (հողի մշակում, պարարտացում, ոռոգում, պայքար մոլախոտերի դեմ, դիմացկուն սորտերի մշակություն և այլն) ստեղծվում են նպաստավոր պայմաններ բույսերի աճի ու զարգացման և անբարենպաստ պայմաններ զրկման հիվանդությունների համար:



### Բույսերի կարանտին

Սա բույսերի պաշտպանության պետական միջոցառումների համալիր է, որի նպատակն է խիստ հսկողություն սահմանել արտերկրից ներմուծվող սերմանյութի, տնկանյութի և այլ ծագում ունեցող բուսական նյութերի նկատմամբ կարանտին զրկման և հիվանդությունների մուտքն ու տարածումը հանրապետությունում կանխարգելելու համար:



### Քիմիական մեթոդ

Այս մեթոդի իրականացման համար կիրառվում են տարբեր պատրաստուկներ միջատասպաններ, սնկասպաններ, սերմերի և հողի ախտահանիչներ, ֆումիգանտներ և այլն: Բացասական հետևանքներն են՝ թունաքիմիկատների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և

օդոտակար ֆաունայի վրա, դրանց թունայնությունը մարդու և տարաբյուս կենդանիների համար: Բացի դրանից, թունաքիմիկատների երկարատև կիրառման դեպքում զրկվում են աստիճանաբար ձեռք են բերում դիմացկունություն դրանց նկատմամբ, ինչը հանգեցնում է պայքարի քիմիական մեթոդի արդյունավետության կտրուկ անկման: Հաշվի առնելով պայքարի քիմիական մեթոդի բացասական հետևանքներն, այն անհրաժեշտ է կիրառել ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարը՝ որպես այլընտրանքային մոտեցում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ  
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2  
Հեռ.՝ (+374 10) 52 36 04  
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am  
Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>